



ԱՐՏԻՔ ԿՈՐՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳՈՐԳԸ

891.995.

4-78

ՊԵՏՏՐԱՏ

2011-07

891.995
4-78

ԱՐ

ՄԿՐՏԻԶ ԿՈՐՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳՈՐԳԸ

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ-ԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՏԵՐԵՎԱՆ 1938

24 MAY 2010

10186



2934

38

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳՈՐԳԸ

Վարպետները սև թելերից մի գորգ հինացին և
գնացին:

Ֆեկան վոր գործեն՝ տեսան սև հենքը կանաչել ե.

Ուրախացան, աշխատեցին մի քիչ ու գնացին:

Նորից յիկան վոր գործեն, տեսան՝ գեղնել ե,

Նի ուրախացան ու գորգի բոլոր թելերը կտրա-
տեցին:

— Ի՞նչ խորհրդավոր գորգ եր այս, և ո՞վքեր
եյին նրա վարպետները:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

Մի անգամ գերձակը, ջրաղացպանը և հյուս-
նը վիճեցին իրար հետ: Դերձակն ասաց.

— Յես ատլասից կարված զգեստ կարող եմ
բերել, վորին մկրատ ու ասեղ չեն կպել:

Ջրաղացպանն ասաց.

— Յես ձեզ համար այնպիսի ալյուր կարող
եմ բերել, վորը ջրաղաց չի մտել:

Հյուսն ասաց.

— Յեռ ախպիսի տաշված կտր փայտ
կըրերեմ, վորին կացին և ուրազ չի դիպել:
Վարպետները գնացին, գնացին ու տեսան,
վոր մի ծառի վրա կախված է ատլասե զգեստ,
վորին մկրատ չեր դիպել, պարկով ալյուր, վորը
ջրադաց չեր մտել, և տաշված կտր փայտ, վո-
րին ուրազ չեր դիպել:

ՄՊԻՏԱԿ ԱՐՏՁ

Հայրը կանչեց վորդուն և ասաց.

— Գտիր ինձ համար մի սպիտակ արտ, վոր-
տեղ սև սիրմ ցանկեր ձեռքով և հնձենք աչքով:
Տղան գտավ սպիտակ արտը:

Մտածենք, գուցե մեզ ել հաջողվի գտնել:

ՆԱԶԻԿԻ ԼԱՑՁ

Մանկապարտեզի բակում առույգ և զվարթ
խաղում եյին յերեխաները: Իսկ վերիում դուրե-
կան աղմուկով ճախրում եյին սավառնակները:
Հանկարծ յերեխաներից մեկը գոչեց՝

— Վա՛յ, վա՛յ, սավառնակը խորտակվում է:

Բոլորը վերե նայեցին: Սավառնակներից
մեկը ծովեց աջ թևի վրա, հետո ձախի վրա ու
ապա գլխի վրա ներքև իջավ: Յերեխաները ճշտ-
ցին վախից:

Մի յերկուսը նույնիսկ այս ու այն կողմը

փախան: Սակայն քիչ հետո սավառնակն ուղղեց
իրեն և սկսեց նորից հարատուրեն սավառնել:

— Յերեխաներ, սավառնակը ժանվան ողակներ
ե կատարում. միք վախենա, բացատրեց մանկա-
պարտեզի ղեկավարը:

Յերեխաները շարունակեցին իրենց խաղը,
իսկ Նազիկը դեռ շարունակում էր լալ:

— Ի՛նչու յես լալիս: Ձե՛ վոր սավառնակին
վոչ մի վնաս չպատահեց, — ասաց ղեկավարը:

— Հա՛, բա վոր մի բան պատահեց, — պա-
տասխանեց Նազիկը:

ՄՍԱԽՈՍ ԾԻՏԻԿԸ

Մի ստախոս ծիտիկ կար:

Մի անգամ ծիտիկը թևերը թափահարեց
ու ձվձվաց:

— Բազեն յեկավ, ոգնեցեք, ոգնեցեք...

Ծիտիկի ծնողները դուրս թափան բնից. Բազե
չկար: Ծիտիկը սուտ էր խոսել: Մի ուրիշ ան-
գամ բազին յեկավ. Ծիտիկը ձվձվաց:

— Բազեն յեկավ, ոգնեցեք, ոգնեցեք...

Ծիտիկի ծնողները դուրս չեկան բնից, կար-
ծելով, վոր այս անգամ ել սուտ է խոսում:

Բազեն տեսավ, վոր ծիտիկը մենակ է, վոչ
փք ոգնուլթյան չի գալիս, վախցրեց ու տարավ:

ՉԱՐ ԱՅԾԻ ԶՐՈՒՅՅԸ

Սարի կրծքից մի գուլալ աղբյուր եր վա-
գում: Սարի այծը արածում եր աղբյուրի մոտ:
Մեկ ել վոտրով տվեց, մաքուր ջուրը պղտորեց:
Գնաց արածեց, կշտացավ, յեկավ ջուր խմելու,
տեսավ պղտոր եր ջուրը:

— Ինչպե՞ս խմեմ այս պղտոր ջուրը, — ասաց
այծը:

Աղբյուրն ասաց.

— Պղտորեցիր պարզ աղբյուրը,
Հիմա խմիր ցեխոտ ջուրը:

ԸՆԿԵՐԱՍԵՐ ՄՐՁՅՈՒՆԸ

Աղավնին գետափ գնաց ջուր խմելու: Տե-
սավ գետի յերեսին մի մրջյուն ե ընկած: Մըր-
ջյունն աշխատում եր մոտենալ գետափին, բայց
ջրի ալիքները նրան խորքն եյին մղում: Աղավ-
նին խելույն թռավ, գնաց մի ծառի ճյուղ բե-
րեց, գցեց գետը: Մրջյունը բարձրացավ ճյուղի
վրա և ափ դուրս յեկավ:

— Շնորհակալ եմ, սիրելի աղավնի, վոր
կյանքս փրկեցիր, քո լավությունը յես չեմ մո-
ռանա, — ասաց մրջյունը:

Անցավ մի քանի օր:

Մի անգամ աղավնին նստած եր ծառի ճյու-
ղին: Մեկ ել հանկարծ վոտին մի սուր ծակոց
զգաց՝ ցած նայեց: Իր ծանոթ մրջյունն եր
կպել եր վոտին ու կծում եր:

Այս դու անպիտան մրջյուն, յես քո կյանքը
փրկեցի, վոր դու ինձ կծե՞ս, — ասաց ու թռավ,
վոր վերելից ցած նետի մրջյունին և վռնչացնի:
— Թրախկ...

Գնդակն անցավ այն ճյուղի վրայով, վորի
վրա նստած եր աղավնին:

Աղավնին ցած նայեց: Դիմացի ծառի հետե-
վում կանգնած եր վոքսորդը՝ հրացանը ձեռքին:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ՊԱՊԻԿԸ

Պապիկը թակարդ սարքեց, բռնեց աղվեսին և
ուզում եր պատժել նրան:

— Ինչո՞ւ յես ուզում պատժել ինձ, — հարց-
րեց աղվեսը:

— Հավաքում մտնելուդ և հավեր պողանա-
լուդ համար, — պատասխանեց պապիկը:

— Ո՞վ ե տեսել, վոր յես հավաքում եմ

մտել,—հարցրեց ազվեսը:

—Ո՞վ պիտի տեսներ, քո պոչն է տեսել:

—Ի՞նչպես կարող էր տեսնել, յերբ յես հավարուն մտնելիս նա դրսում մնաց, արդարացա՞վ ազվեսը, բայց պապիկի պատժից չազատվեց:

ԻՆՔՆՍԱՎԱՆ ԱՔԼՈՐԸ

Աքլորը գժգոհ էր իր անբոլորի:

—Ինձ որը մի բուռ գարի յե տալիս, իսկ յես ամենադժվար աշխատանքն եմ կատարում: Յես եմ վույժ աշխարհը զարթեցնում: Իմ կանչով է լույսը բացվում, յեթե յես չկանչեմ, լույսը չի բացվի:

Այսպես մտածեց ինքնահավան աքլորն ու գազարեց լուսադեմին կանչելուց:

Անցավ մի քանի օր: Տերը տեսավ, վոր աքլորը չի կանչում. —

—Ձեռն կանչում, մի կանչիր, առանց քեզ ել լույսը բացվում է, — ասաց ու մորթեց աքլորին:

ՏԵՐՏԵՐԻ ՄԱՁԵՐԸ

Մուրիկն ու վանիկը փողոցում մի տերտեր տեսան. տերտերի մորուքն սպիտակ էր, իսկ գլխի մազերը սև:

—Ի՞նչիցն է տեսնես,—հարցրեց վանիկը, վոր մորուքն արդեն սպիտակել է, իսկ գլխի մազերը՝ վոչ:

Այդ նրանից է, վոր նա իր ծնոտն ավելի շատ է աշխատեցրել, քան թե գլուխը, — ասաց Մուրիկը:

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԿԵՏԸ

Մի որ առյուծն ու կետը վիճեցին իրար հետ:

—Յես կարող եմ լողալով կարել ծովը և անցնել մյուս ավի,— ասաց առյուծը:

Կետը ժպտաց:

— Իզուր ես ժպտում, — ասաց առյուծն ու նետվեց ծովի փրփրաբաշ ալիքների մեջ:

Կետը տեսավ, վոր առյուծը սուզվում է և անպայման կխեղդվի, իսկույն վրա հասավ, ու ժառագառ առյուծին ավ հանեց ու ասաց.

— Ինչո՞ւ գոռոզացար և ծովը մտար, չե՞ վոր դու արժա յես ցամաքի վրա, և վոչ թե ջրի մեջ:

ՄԻ ԱՆԳՍՄ ԱՄՈՒՆԸ

Մի անգամ ամռանը յերեխաները գետը գնացին լողանալու: Տղաներից մեկը գետի խոր-

քը գնաց և վարովհետև լողալ չեր իմանում, վերադառնալ չկարողացաւ:

Նա անշուշտ կխեղդվիր, յիժե ընկերները վրա չհասնելին և չազատելին գետի հորդառատ ալիքներից:

Յերեկոյան յերբ հայրն իմացաւ այդ դեպքի մասին, բարկացած հարցրեց.

— Ինչո՞ւ գետը մտար, յերբ լողալ չէիր իմանում:

— Իսկ առանց գետը մտնելու լողալ կարճո՞ւ ելի սովորել, — պատասխանեց տղան:

ՀՐԱՇԱՆԻ ՆԱԽԱՃԱՇ

Գորտը տեսաւ, վոր թիթեռը ջուր ե խմում գետից:

— Հրաշալի նախաճաշ կլինի ինձ համար, — ասաց ու հափ, բռնեց թիթեռին:

Արագիլը մի վտտի վրա ցից, կանգնած եր գետափին: Տեսաւ գորտին նախաճաշ անելիս, կայծակի պէս վրա հասաւ:

— Դու ել ինձ համար հրաշալի նախաճաշ կլինես, — ասաց ու կտցեց գորտին:

ԾՈՒՅԼ ԶԻՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Պարտիզպանը մի ձի ուներ:

Ամեն որ թարմ կանաչով կերակրում, մաքուր, ջրով լողացնում եր նրան, հետո լծում եր փոքրիկ սայլակը և գնում քաղաք ծաղիկներ վաճառելու: Զին դժգոհ եր տիրոջից, նա զանգատվում եր իր բարեկամ աղաւթուն:

— Յես ուղում եմ առանց աշխատելու հանգիստ պառկել կանաչի մեջ, իսկ տերս չի թողնում:

Ախր առանց աշխատելու վճեց կարելի չէ, — ասում եր աղաւթին:

— Իսկ յես կարծում եմ, վոր կարելի չէ, — ասում եր ձին և սկսում վտտ աշխատել: Ճանապարհը դանդաղ եր գնում կամ պառկում ու չեր լսում տիրոջը: Տերը տեսաւ վոր ձին լավ չէ աշխատում, ծախեց փայտավաճառին:

Փայտավաճառն ամեն որ լույսը չբացված հեծնում եր ձին ու քշում անտառ, փայտ եր բարձում ու հայդե դեպի քաղաք: Զին այդ տիրոջից ևս դժգոհ եր: Նա զանգատվում եր իր բարեկամ աղաւթուն:

— Հանգիստ չեն տալիս ինձ: Յեռ ուզում եմ պառկել կանաչների մեջ, իսկ ինձ աշխատեցնում են:

— Ախր առանց աշխատելու վճեց կարելի չէ,— ասում եր աղափին:

— Իսկ լեռ կարծում եմ, վոր կարելի չէ,— պատասխանում եր ձին և նորից սկսում եր իր ծուլ-վթուհը:

Փայտավաճառը տեսավ վոր ձին լավ չի աշխատում վտճառեց կաշեգործին:

Աղափին յիշար ժամանակ եր, ինչ չեր պատահել ձիուն:

— Գնամ մի տեսնեմ ի՞նչ ե անում իմ բարեկամ ձին, — ասաց ու թռավ կաշեգործի մոտ:

Տեսավ վոր կաշեգործի դռանն իր բարեկամ ձին չկա, իսկ ձիու կաշին փռել եյին վոր չորանա:

— Ախ դու անպիտան ձի, ինչո՞ւ ծուլացար, փախար աշխատանքից, վոր վերջն ել կաշվիցդ կոշիկ պիտի կարեն, — ասաց աղափին ու թռավ:

ԽՈՐԱՄԱՆԿ ՓԻՍԻԿԸ

Խոհանոցում մի կտոր միս եր կախված: Փիսիկը դեռ ընկավ, դեն՝ չկարողացավ հասնել մսին:

Շատ չարչարվելուց հետո, թողեց խոհանոցն ազնայ տատիկի մոտ:

— Տատիկ, ես անպիտան Բողարը ման ե պալիս խոհանոցի շուրջը, վոր միսը փախցնի:

Տատիկը գնաց միսը բերեց դրեց պահարանն ու փակեց: Փիսիկն այս անգամ սկսեց պահարանի շուրջը պտույտ գալ, բայց իզուր, պահարանն ամուր եր փակված, միսը տանելու վոչ մի հույս չկար: Փիսիկն ելի գնաց տատիկի մոտ:

— Տատիկ, ախր միսը պահարանում հոտե՞լ ե, դուրս ձգի՞ր:

— Ախ դու խորամանկ փիսիկ, քիթդ մսին չհասավ, ասում ես հոտած ե,— պատասխանեց տատիկը:

ՀՐԱՋԻԿԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸ

Հրաչիկն աղմուկով սենյակ ընկավ և ասաց մորը:

— Այսոր մեր ուռսաց լեզվի առաջի դասն եր, անքան նոր բան սովորեցի, այնքան նոր բան... Յեռ հիմա ամեն ի՞նչ գիտեմ:

Մայրը ծիծաղեց:

— Լավ, ասա մի տեսնեմ, կառվին ի՞նչ են ասում:

— Комка:

— Իսկ կառվի ձագին:

Հրաչիկը կանգ առավ:

—Այդ եր քո ամեն ինչ գիտենալը: Պար-
ծենկո՞ւ:

—Դե յես ինչ անեմ,—գլուխը քորելով
ասաց Հրաչիկը. ուսերեն կառվի ձազը անուն
չունի, սպասում են, վոր մեծանա, հետո կառու-
սանն:

ՀԻՎԱՆԳԻ ԱՌՅՈՒԾԻ, ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՎԵՍԻ
ՅԵՎ ԱՆՆԵԼՔ ԱՐՋԻ ՄԱՍԻՆ

Առյուծը մի որ իր մոտ կանչեց աղվեսին ու
ասաց.

—Սաստիկ հիվանդ եմ, ինձ համար մի արջ
գաիր, ուղեղն ուտեմ, առողջանամ:

Աղվեսը գնաց արջի մոտ և սկսեց լերգել:

«Առյուծը հիվանդացել է,

Ու մահը մոտեցել է.

Պարիր, արջուկ ջան, պարիր,

Դու յես տերը անտառի»:

—Ինչպե՞ս թե յես եմ անտառի տերը:

Առյուծը մեռնելուց առաջ ուզում է քեզ
տեսնել և անտառի թագավորութունը քեզ տալ:
Վազիր նրա մոտ:

Արջը հավատաց: Վազեց առյուծի մոտ:
Առյուծը վրա պրծավ, ուզում էր հոշոտել արջին,
բայց արջը կարողացավ դուրս պրծնել նրա ճան-

կերից և վազեց, վոր աղվեսին գտնի, վրեժն առնի:
Կանաչ անտառում մի ծառի տակ նստել եր
առյուծը և առաջնորդ կաթ եր խմում ու հեռն
եւ յերգում.

«Առյուծը հիվանդացել է,

Յեվ մահը մոտեցել է,

Պարիր, արջուկ ջան պարիր,

Դու յես տերը անտառի»:

—Յես քեզ անտառ ու թագավոր ցույց կտամ,
հիմար աղվես:

—Քեզ ի՞նչ է պատահել, սիրելիս, մի քիչ
նստիր, քեզ դրստիր, մարգավարի բան ասա:

—Ել ինչ պիտի պատահի, հազիվ պրծա
առյուծի ճանկից:

—Տաքության մեջ ե լեզել, քեզ չի ճա-
հաչել. առ այս կաթը խմիր, մի քիչ հանգստա-
ցիր. յեղնեք միասին գնանք առյուծի մոտ: Ինձ
հետ վոր տեսնի, կճանաչի:

Քաղցած արջը, պտուկով լիքը կաթը.

Արջավարի վրա պրծավ և գլուխը կոխեց պու-
տուկի մեջ, վերջն ել գլուխը հանել չկարողացավ:

—Սիրելի աղվես, ոգնիր ինձ, վոր գլուխս
պտտուկից հանեմ:

—Ուժիցս վեր բաներ անել չեմ կարող,—
պատասխանեց աղվեսը:

— Չե՞ փոր շուտով թագաւոր եմ դառնալու
ոգնիր ինձ, փոր հետո յես ել քեզ լավ աչքով
նայեմ, ասաց արջը:

— Դու հիմա նեղն ես ընկել, դրա համար ես
ինձ կանչում, յեթե լեսն ընկնես, կասես չեմ ել
ճանաչում: Հիմա յես քեզ փոշ ոգնել, կարող եմ,
փոշ ել աղատել, — պատասխանեց աղվեսը:

— Դե լավ, մի յեւթ ցույց տուր, դուրս
գամ, — ասաց արջը:

— Վոչ մի յեւթ չկա բացի մեկից: Գետը
գնա, ջուրը լցրու պոտուկի սեջ, պոտուկը կխեղդ-
վի, քեզ բաց կթողնի:

Արջը գնաց գետակը, պոտուկը ջրով լցրեց,
խեղդվեց և ընկավ գետափին: Աղվեսը վրա պը-
ծավ, ուղեղը հանեց՝ կերավ, կշտացավ: Հենց այդ
ժամանակ ել առյուծը յեկավ:

— Անպիտան աղվես, ինչո՞ւ արջին չուղար-
կեցիր ինձ մօտ, փոր ուղեղն ուտեմ՝ առողջանամ:

— Արջի գանգը բաց արի, ուղեղ չունես, ել
ինչո՞ւ ուղարկեցի:

— Իսկապես փոր, յեթե արջը ուղեղ ունե-
նար, առյուծի ձեռքից պրծնելուց հետո աղվեսի
ձանկը չեր ընկնի, — ասաց առյուծն ու հեռացավ:

ՀՐԴԵՀ ԱՐԾՎԻ ԲՆՈՒՄ

— Հրդեհ արծվի բնում:

— Այո, իմ աչքերով տեսա այդ, — ասաց մի
անգամ հովիվ ընկերս:

— Սպասիր, Չե՞ փոր արծիվն իր բունը շի-
նում ե բարձր ու անմառչելի ժայռերում, ուր
փոշ մարդկային ձեռք կարող ե հասնել, փոշ ել
աչք տեսնել: Ինչից կարող եր հրդեհ ծագել:

— Այ թե ինչից:

Յեւ հովիվ ընկերս պատմեց հետեւյալ փոք-
րիկ պատմութիւնը:

Մի անգամ մենք խարույկ եյինք վառել
սարերում, մորթել եյինք մի չաղ փոխար, դրել
կրակին, փոր խորովվի՝ ուտենք: Մեկ ել վերելից
մի հսկա արծիվ նետի արագութեամբ ներքեւ
սլացտի, իր սուր ճանկերով հափշտակեց միսը
կրակի վրայից ու նույն արագութեամբ թռավ
վերեւ: Մենք ներքեւից տեսնում եյինք թե ինչ-
պես մսի վրա ֆնացած կրակի կայծերը պեծին
եյին տալիս ուղում: Միսը նրա ճանկերից փոշ
մի կերպ ազատել չեյինք կարող, միայն հեռվից-

Նորհրդավոր գործը—2

հեռու գիտում ելինք արծվին, գովում նրա ճարպ-
կությունը և ուժը: Արծիվն իր վարսը դեպի բունն
եր տանում: Մենք մի նոր փոշխար մորթեցինք և
դրեցինք կրակին: Մեկ ել հանկարծ մի սուր ճչոց
լսեցինք: Վեր նայեցինք. միսը հափշտակող ար-
ծիվն եր աղմկում: Մեր խարույկից հափշտակած
մսի վրա յեղած կրակներից բռնկվել եր արծվի
բունը և այրվում եր: Արծիվն աշխատում եր թե-
վերով մարել կրակը, բայց մարելու փոխարեն
կրակն ավելի յեր բորբոքում: Մեկ ել վրա հասավ
հայր արծիվը: Առանց խնայելու իրեն, նետովեց
հրդեհի բոցերի մեջ ու գուրս քաշեց ափսոսելից,
իր նորափետուր ձագերին: Բունը, իհարկե մինչև
վերջին ծղոտն այրվեց:

Արծիվները նոր բուն շինեցին ու տեղավոր-
վեցին ափսոսելի:

— Հետո, — անհամբեր վրա տվի յես:

— Այ, հետաքրքրականն ու զարմանալին հե-
տո յե, — շարունակեց հովիվ ընկերս:

Անցավ ուղիղ մի տարի:

Նույն սարում մենք խարույկ ելինք վառել,
փոշխար դրել կրակին և հանգիստ գրուցում ելինք:
Մեկ ել տեսանք, վոր նույն արծիվը ցած սլա-
ցավ, խարույկի վրայից հափշտակեց մսի մի մեծ
կտոր ու վեր թռավ:

— Ես ե, վորտեղ վոր ե, հրդեհը կսկսվի, —
մտածեցինք մենք: Բայց մենք սխալվեցինք:
Արծիվն այս անգամ այլ կերպ վարվեց: Կիսա-
թորով միսը, փոխանակ ուղիղ իր բունը տանե-
լու, տարավ դրեց մի ծառի վրա, իր ուժեղ կտցով
բռնեց մսի մի ծայրից, թափահարեց միջա-
նի անգամ, խփեց ծառի ճյուղերին, ելի թա-
փահարեց, և յերբ համոզվեց, վոր կրակի հետք
չկա, բունը տարավ,

— Այ բեզ խելք:

— Այո՛ արծիվները բավականին սրամիտ
թռչուններ են:

ԹԵՎ.Ա.ՆԻ ՀԱՐՍՍԱՆԻՔԸ

1

Հարստի մեկը Թեան անունով մի տղա
ուներ: Թեանն այնքան ծուլ ու անբան եր, վոր
ալարում եր իր՝ ձեռքով ջուր վերցնել, խմել:
Ջուրն ուրիշի ձեռքով եր խմում, շորերն ուրիշ-
ներն ելին հագցնում: Ամբողջ որը պառկում եր
ծառի տակ, նայում հասած մրդերին ու առում՝

— Ե՛յ, տանձի ծառ, անիծած,

Մի հասած տանձ գցիր ցած,

Եյ, տանձի ծառ, անիծած,

Մի հասած տանձ գցիր ցած:

Ինքն ալարում եր վերկենար, քաղեր, ուտեր:
Այսպես պարապ մնալուց Թեանի ձեռքերը թու-
լացել, կախ եյին ընկել:

2.

Թեանն արդեն հասակն առել եր:
Հայրը մտածեց ամուսնացնել և հարսա-
նիք անել:

— Լավ, հարսանիք անես,

Բա հարս վերտեղից ճարես:

Հայրը դես ու դեն ընկավ: Ում գիմում եր,
մի գլուխ ես եյին հարցնում.

— Ի՞նչ տղա յե:

— Թեանն ե:

— Մոռյլ Թեանը: Աղջիկ չունենք:

3

Հոր ճարը վոր կտրվեց, մի միջնորդ գտավ
— Այս ինչ տեղը մի լավ աղջիկ կա, ասաց
կգնաս հորը կպատմես՝ թե ինչ կարողության
տեր եմ յես, ունեցածս մեկն յերկուս կանես,
ու աղջիկը կուզես:

4.

Միջնորդը գնաց ու մի քանի որից վերա-
դարձավ:

— Գտա՛ր, հարցրեց հայրը:

— Գտա, ասաց միջնորդը:

— Ե, վհնց յեղավ:

— Վհնց պիտի լինի, գնացի աղջկա հոր մոտ,
ինչպես վոր ասել եյիր, այնպես ել արեցի, մի
ջրաղաց ունես, ասացի յերկուսն ունի, մի բաղ
ունես, ասացի յերկուսն ունի, մի խոսքով ինչ-
պես վոր պատվիրել եյիր մեկն յերկուս արի:
Վերջն ել թե՛ տղան ինչ տղա յե, գործ, մործ
անում ե, ասացի չե, ասացին ինչո՛ւ, ձեռք-
մեռք չունի՞, յես խելույն հիշեցի, վոր մեկն
յերկուս պիտի անեմ, ասացի — պարապ մնալուց
ձեռքի մեկը թուլացել ե, մեկն ել՝ փայտացել
ե: Նրանք ել թե՛ վոր այդպես ե, ձեր Թեանը
ձեզ, մեր աղջիկը մեզ:

5

Ու պատմում են թե են որվանից մինչև
այսոր Թեանը պառկել ե ծառի տակ ու հուլսով
ե թե՛ իր հարսանիքը շուտով կլինի:

— Ե, թող լինի:

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԻՆՉ ՊԱՏՄԵՑ ՅԵՐԵՄԱՆ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ
ԻՆՉՊԵՍ Ե ԻՆՔԸ ՓՈԹՈՐԿԻ ՀԱՆԴԻՊԵԼ,
ԱՆՏԱՌՈՒՄ

Յերբ յես փոքրիկ եյի, ինձ ուղարկեցին
անտառ սունկի: Յես հասա անտառ, սունկ հա-
վաքեցի և ուզում եյի տուն վերադառնալ: Հան-
կարծ յերկինքը մթնեց, անձրև յեկավ և վորոտ
սկսվեց: Յես վախեցա և նստեցի մի մեծ կաղնու
տակ: Հանկարծ փայլատակեց կայծակը, այնքան
պայծառ և լուսավոր, վոր աչքերս ցավից փա-
կեցի:

Իմ գլխավերելում ինչ վոր մի բան ճոճում
ու վորոտում եր: Հետո ինչ վոր մի բան կպավ
գլխիս: Յես վայր ընկա և այնքան սպասեցի,
մինչև վոր անձրևը դադարեց: Յերբ յես ուշքի
յեկա, անտառի բոլոր ծառերից անձրևաջուր եր
կաթկթում, թռչունները յերգում եյին և արևը
խաղում եր:

Մեծ կաղնին գլորվել եր և նրանից ծուխ
եր բարձրանում: Իմ շուրջը փոված եր ճղնա-

կոտոր կաղնին: Շորերս սաստիկ թրջվել էյին անձրեկից և կպել էյին մարմնիս:

Գլխիս ուռուցք եր գոյացել և միքիչ ցավում ել: Յես գտա գլխարկս, հավաքեցի սունկերը և փախա տուն: Տանը վոչ վոք չկար: Սեղանի վրայից մի կոտոր հաց վերցրի և բարձրացա վառարանի վրա: Յերբ արթնացա, տեսա վոր իմ բերած սունկերը տապակել են և ուզում են ուտել: Յես ձայն տվի:

— Այդ ի՞նչ ե, առանց ի՞նձ եք ուտում:

Նրանք պատասխանեցին:

— Ինչ անենք, դու քնած ես, շուտ արի դու ել կեր:

ԿՈՐԻՁԸ

Մայրը սալոր եր գնել և ուզում եր ճաշից հետո բաժանել լերեխաներին: Սալորն ափսեյով զրված եր սեղանի վրա: Վանյան յերբեք սալոր չեր կերել, նա շատ եր ուզում համը տեսնել, շարունակ շրջում եր սալորների շուրջը և հոտոտում: Յերբ տեսավ վոր սենյակում մարդ չկա, չհամբերեց, վերցրեց մի սալոր ու կերավ: Ճաշից առաջ մայրը հաշվեց սալորները, տեսավ՝ մեկը պակաս ե, հայտնեց հորը:

Ճաշի ժամանակ հայրն ասաց.

— Դե, յերեխեք, ձեզանից մեկն ու մեկը սալոր չի՞ կերել:

Բոլորը պատասխանեցին:

— Վոչ:

Վանյան խեցգետնի նման կարծրեց և նույնպես պատասխանեց.

— Վոչ, յես չեմ կերել:

Այն ժամանակ հայրն ասաց.

— Ձեզանից ով ել վոր կերել ե, վատ ե արել, բայց ցավն այդ չե: Յովն այն ե, վոր սալորի մեջ կորիզ կա և ով վոր չկարողանա ուտել կորիզը և կուլ տա, մի որից հետո կմեռնի: Յես դրանից եմ վախենում:

Վանյան գունատվելով ասաց.

— Վոչ, յես կորիզը լուսամուտից դուրս նետեցի:

Բոլորը ծիծաղեցին, իսկ Վանյան լաց յեղավ:

ԱՂՋԻԿՆ ՈՒ ՍՈՒՆԿԵՐԸ

Յերկու աղջիկ, սունկ հավաքած՝ տուն էյին գնում: Նրանք պետք ե անցնեյին լերկաթզի վրայով:

Կարծելով, թե գնացքը հեռու չե, բարձրացան վերև ու սկսեցին քայլել ռելսերի արանքով: Հանկարծ լավեց գնացքի ձայնը: Մեծ քույրը

Յետ փախալ, իսկ փոքրը շարունակեց վազել։
Մեծ քույրը բղավեց։

— Յետ մի դառնա։

Բայց գնացքն այնքան մոտ երևալէս
էր աղմկում, վոր փոքր քույրը չիմացալ մեծի
ասածը. նա կարծեց, թե իրեն հրամայում են
յետ փախչել։

Նա ուխտերի վրայով հետ վազեց, սայթա-
քեց, սուռկերը թափվեցին և նա սկսեց հավաքել։

Գնացքը չափազանց մոտ երևեալէս
սուլում եր, վորքան վոր ուժ ունեւր։

Մեծ քույրը բղավում եր — «Թող սուռկերը»,
իսկ փոքրը կարծեց թե ասում ե՝ հավաքիր, և
սկսեց ճանապարհի վրա սողալով սուռկերը հա-
վաքել։

Մեքենավարը գնացքը կանգնեցնել չկարո-
ղացալ։ Նա սուլում եր վորքան վոր ուժ ունեւր
և գնացքն անցալ աղջկա վրայով։

Մեծ քույրը գոռում եր ու լալիս։ Բոլոր
ուղեւորները նայում էին լուսամուտներից —
իսկ վագոնավարը վազեց ծայրի վագոնը, վոր
տեսնի թե ինչ պատահեց աղջկան։ Յերբ գնացքն
անցալ, բոլորը տեսան, վոր աղջիկն անշարժ
պառկած ե գույգ գծերի արանքում։ Հետո, յերբ
գնացքը հեռացալ, աղջիկը գլուխը բարձրացրեց,
թռալ ծնկների վրա, հավաքեց սուռկերը և վա-
զեց քրոջ մոտ։

ԿԱՏՎԻ ՉԱԳԸ

Վասյան ու Կատյան քույր ու յեղբայր ելին։
Նրանք մի կատու ունեյին։ Գարնանը կատուն
կորալ։ Յերեխաները նրան շատ փնտոեցին,
բայց վոչ մի տեղ չգտան։ Մի անգամ, յերբ նը-
րանք խաղում ելին շտեմարանի մոտ, վերեւից
թույլ նվոցներ լսեցին։ Վասյան սանդուխք դը-
րեց և բարձրացալ շտեմարանի վրա, իսկ Կա-
տյան կանգնել եր ներքնում և անհամբեր հարց-
նում եր։

— Գտա՞ր, գտա՞ր։

Բայց Վասյան նրան չեր պատասխանում։
Վերջապես նա բղավեց։

— Գտա, մեր կատուն ե, ճուտեր ել ունի,

ինչ լավն են։ Շուտ արի այստեղ։

Կատյան տուն վազեց և կաթ բերեց կատվին։

Ճուտերը հինգ հատ ելին։ Յերբ նրանք
մի քիչ մեծացան և սկսեցին իրենց անկյունից
գուրս գալ, յերեխաները ճուտերից մեկին, վոր
գորշ գույն ունեւր և սպիտակ թաթիկներ, վերց-

դին ու տուն բերին: Մայրը մշուս ձագերը բա-
ժանեց հարեւաններին, իսկ այդ մեկը թողեց
յերեխաներին: Յերեխաները կերակրում էին
նրան, խաղում էին հետը և իրենց հետ քնեցնում:

Մի անգամ յերեխաները դուրս գնացին
խաղալու և կառվի ձագին ել իրենց հետ տարան:

Քամին շարժում եր ճանապարհին թափված
ծղտները, կառվի ձագը խաղում եր նրանց հետ,
և յերեխաներն ուրախանում էին նրանով: Հետո
նրանք ճանապարհի մոտ ավելուկ գտան, սկսեցին
քաղել և մոռացան ձագին:

Հանկարծ նրանք լսեցին, վոր մեկը բարձր
բղավում ե—«Յեա դարձիր, յեա դարձիր», և
տեսան, վոր սլանում ե մի վորսորդ, իսկ նրա
յերկու շները կառվի ձագին տեսնելով՝ ուզում
էին հափշտակել նրան: Հիմար ձագը փոխանակ
փախչելու, կպել եր գետնին, մեջքն ուռցրել և
նախում եր շանը:

Կապան վախեցած շներից ու հեռու փախալի:
Վասյան, վորքան վոր ուժ ուներ, վագեց դեպի
ձագը և շների հետ միասին հասավ նրան: Շներն
ուզում էին փախցնել ձագին, բայց Վասյան
բերինքովար ընկավ ձագի վրա և պաշտպանեց
նրան շներից: Վորսորդը ձիով վրա հասավ և շը-
ներին հեռացրեց: Վասյան կառվի ձագին տուն
բերեց և դրանից հետո ասլես իր հետ նրան դաշտ
չեր տանում խաղալու:

ԱՌԱԿՆԵՐ

ԲԱՒՆ ՈՒ ԼՈՒՍԻՆՔ

Մի բազ ամբողջ որը լողում եր գետում,
ձուկ վորոնում, բայց վոչ մի ձուկ չկարողացավ
դանել: Յերը գիշերը վրա հասավ, բազը ջրում
տեսավ լուսինը, կարծեց թե ձուկ ե և սուզվեց
ջրի մեջ, վոր լուսնին բռնի: Միւս բազերը տե-
սան այս և սկսեցին ծիծաղել նրա վրա:

Բազն այնքան ամաչեց, վոր դրանից հետո
եւ, յերը ջրի մեջ ձուկ եր տեսնում, չեր վորսում
և ախպիսով նա սովից սառկեց:

ՄՈԾԱԿՆ ՈՒ ԱՌՅՈՒԾՔ

Մոծակը թռավ առյուծի մոտ և ասաց.

—Դու կարծում ես թե ինձանից ուժեղ ես,
ինչպես չե, ինչ ուժ ունես վոր: Յեվ ինչ ես յե-
ղունգներով ճանդոտում և ատամներդ կրճատե-
նում կռվարար պառավի պես: Յեա քեզանից
ուժեղ եմ, չեմ հավատում, յեկ կռվենք:

Յեվ մոծակը սղզաց ու սկսեց կծոտել առյուծի

քիթն ու մերկ այտերը: Առյուծն սկսեց թաթերով խփել իր յերեսին և մազիլներով ճանգոտել: Իր ամբողջ յերեսը ճանգոտեց, արյունվիկ արավ և ուժասպառ ելավ:

Մոծակն ուրախությունից տոգաց և թռավ գնաց: Հետո նա խճճվեց սարդի վոտախում: սարդն սկսեց ծծել նրա արյունը: Մոծակը մտածեց ինքնիրեն.

— Ամենահզոր առյուծին հաղթեցի, բայց հաղթվում եմ այս անպիտան սարդից:

ՇՈՒՆՆ ՈՒ ԻՐ ՍՏՎԵՐԸ

Մի կտոր միս բերանն առած՝ շունն անցնում էր գետակի վրայով գցված գերանով: Իր պատկերը տեսնելով ջրում, նա կարծեց, թե այնտեղ մի ուրիշ շուն կա մսի կտորը բերանին. նա ցած գցեց իր բերանի միսը և հարձակվեց նրանից միսը խլելու, բայց այնտեղ վուշ մի միս ել չկար և իր ունեցած միսն ել ջուրը տարավ և շունը մնաց առանց մսի:

ԿԱՊԻԿՆ ՈՒ ՍԻՍԵՌԸ

Կապիկը յերկու լիքը բուռ սիսեռ եր տանում: Հանկարծ մի սիսեռ ցած ընկավ: Կապիկն

ուզեց ընկած սիսեռը վերցնել, բայց քսան սիսեռ թափեց: Նա վրա պրծավ հավաքելու, բայց շաղ տվեց ամբողջը: Այն ժամանակ նա բարկացավ, ցրիվ տվեց ամբողջ սիսեռն ու փախավ:

ՅԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Անտառով անցնում էլին յերկու ընկեր. հանկարծ նրանց դիմացն լեռով մի արջ: Ընկերներեց մեկը փախավ, ծառը բարձրացավ, իսկ մյուսը մնաց ճանապարհին: Հնար չկար — պառկեց գետնի վրա ու մեռած ձևացավ:

Արջը մոտենալով նրան սկսեց հոտոտել. մարդը շնչելն ել դադարեց:

Արջը հոտոտեց նրա յերեսը, կարծեց թե մեռած է և հեռացավ:

Յերբ արջը գնաց, մյուս ընկերը ցած իջավ ծառից, սկսեց ծիծաղել ու հարցրեց.

— Հը՛ արջն ի՞նչ ասաց տկանջիդ:

Ընկերը պատասխանեց՝

— Արջն ինձ ասաց, թե վատ են այն մարդիկ, վորոնք վտանգի ժամանակ իրենց ընկերոջը թողնում, փախչում են:

ՆԱԳԱՍՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐՑԵՐԸ

Մի անգամ նապաստակները հավաքվեցին և սկսեցին գանգատվել իրենց կյանքից.

— Բոլորը մեզ վռնչացնում են, և՛ մարդիկ, և՛ շները, և՛ արծիվները, և՛ մյուսները: Ավելի լավ է միանգամից մեռնել յեկեք գնանք ջուրը թափվենք, խեղդվենք:

Յեվ նապաստակները վազեցին դեպի լիճը խեղդվելու: Ափին նստած գորտերը տեսնելով նապաստակներին՝ վախեցան ու ջուրը թափվեցին: Այս տեսնելով՝ մի նապաստակ ասաց.

— Սպասեցեք, տղերք, ջուրը միք թափվի, տեսեք, գորտերի կանքը մերինից ել վատ է, նրանք մեզանից ել են վախենում:

ՄՈՒԿԸ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՏԱԿ

Շտեմարանի տակ մի մուկ եր ապրում: Շտեմարանի հատակին մի փոքրիկ անցք կար, փորտեղից ցորենի հատիկներ ելին ցած թափվում: Մկնիկը լավ եր ապրում, բայց նա ուղեց

իր ընկերների մոտ պարծենալ իր ապրուստով: Կրծելով՝ անցքը լախացրեց և հյուր կանչեց իր ընկեր մկներին:

— Յեկեք ինձ մոտ, — ասաց նա, — յես ձեզ կհյուրասիրեմ: Բոլորիդ համար ել ուտելիք կլինի:

Յերը նա իր ընկեր մկներին տուն բերեց, տեսավ, վոր վոչ մի անցք ել չկար: Շտեմարանի տերը նկատելով հատակի մեծ անցքը՝ փակել եր այն:

ՅԵՂՋԵՐՈՒՆ

Յեղջերուն մոտեցավ գետին ջուր խմելու, ջրում տեսավ իրեն, հիացավ իր մեծ ու փաթթամ յեղջուրներով: Ապա նայելով վոտքերին՝ ասաց — միայն վոտքերս են նիհար և տգեղ: Հանկարծ դուրս պրծավ մի առյուծ ու հարձակվեց նրա վրա: Յեղջերուն սլացավ արձակ դաշտերով: Նա արդեն հեռանում եր, բայց յերբ հասավ անտառ, յեղջուրները խճճվեցին ծառերի ճյուղերի մեջ և առյուծը բռնեց նրան: Մեռնելու րոպեյին յեղջերուն ասաց.

— Ա՛յ թե հիմար եմ յես. ինչ վոր վատ ու բարակ եյի համարում, նրանք փրկում ելին ինձ, իսկ ինչ վոր ինձ ուրախացնում եր, նա իմ մահվան պատճառը յեղավ:

ԱՂՎԵՍԸ

Աղվեսը թաղարդն ընկավ, պոչը պոկվեց և նա փախավ և սկսեց մտածել, թե ի՞նչ ձեվով ծածկի իր այդ խայտառակությունը: Նա հավաքեց աղվեսներին և սկսեց համոզել նրանց, վոր իրենց պոչերը կտրեն:

— Ինչներիս և պետք պոչը — ասում ե, — ավելորդ բեռ ե մեզ, ուրիշ վոչինչ:

Այն ժամանակ մի աղվես ասաց.

— Այս, անպիտան, դու աչդ չեյիր ասի, յեթե պոչդ լիներ: Պոչատ աղվեսը լռեց ու հեռացավ:

ԹՈՒԽՍՆ ՈՒ ՃՈՒՏԵՐԸ

Թուխսը ճուտեր հանեց, բայց չեր իմանում վոնց պաշտպանի նրանց: Յեվ անա նա նրանց ասաց.

— Նորից մտեք կճեպի մեջ, յես առաջվա պես թեվերիս տակ կառնեմ ձեզ և կպաշտպանեմ: Ճուտերը լսեցին և փորձեցին մտնել կճեպի մեջ, բայց վոչ ժի կերպ չկարողացան տեղավոր-

վել և միայն իրենց թևերը տրորեցին: Այդ ժամանակ մի ճուտ ասաց մորը:

— Յեթե մենք պիտի միշտ կճեպի մեջ մնայինք, ավելի լավ կլիներ մեզ ձվից հանած չլինեյիր:

ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂԱՎՆԻՆԵՐԸ

Ագռավը տեսավ, վոր աղավնիներին լավ են կերակրում, իրեն սպիտակեցրեց և մտավ աղավնաճուղի: Աղավնիներն սկզբում կարծեցին, թե նա իրենց պես մի աղավնի լե, ներս թողեցին. բայց ագռավը մոռացավ, վոր իրեն աղավնի պիտի ձեվացներ, և ձայնովը մեկ կռավեց: Այն ժամանակ աղավնիները կոցահարելով քշեցին նրան: Ագռավը թռավ իր ընկերների մոտ, բայց ագռավներն ել վախեցան նրանից, վորովհետև նա սպիտակ եր և նույնպես քշեցին:



Յ Ա Ն Կ

1. Նորհրդավոր դորդը	3
2. Հետաքրքիր վարպետները	3
3. Սպիտակ արտը	4
4. Նազիկի լացը	4
5. Ստախոս ծիտիկը	5
6. Չար աշծի զրույցը	6
7. Ընկերասեր մըջունը	6
8. Աղվեսն ու պապիկը	7
9. Ինքնահավան աքլորը	8
10. Տերտերի մագերը	8
11. Առյուծն ու կետը	9
12. Մի անգամ ամռանը	9
13. Հրաշալի նախաճաշ	10
14. Ծույլ ձիու վախճանը	11
15. Խորամանկ փիսիկը	12
16. Հրաշիկի առաջին դասը	13
17. Հիվանդ առյուծի, խորամանկ աղվեսի և ան- խելք արջի մասին	14
18. Հրդեհ արծվի բնում	17
19. Թեանի հարսանիքը	19

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԼԵՎ ՏՈՒՍՏՈՅԻ

1. Ինչ պատմեց յերեխան այն մասին, թե ինչ- պես է ինքը փոթորկի հանդիպել անտառում	25
2. Կորիզը	26
3. Աղջիկն ու սունկերը	27
4. Կառվի ձագը	29

ԱՌԱԿՆԵՐ Լ. ՏՈԼՍՏՈՅԻ

1. Բաղն ու լուսինը	31
2. Մոծակն ու առյուծը	31
3. Շուռն ու իր ստվերը	32
4. Կապիկն ու սիսեռը	32
5. Յերկու ընկեր	32
6. Նապաստակներն ու գորտերը	34
7. Մուկը շտեմարանի տակ	34
8. Յեղջերու	34
9. Աղվեսը	36
10. Թուխսն ու ճուտերը	36
11. Ագռավն ու աղավնիները	36

Խմբագիր՝ Հ. Հայրապետյան

Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան

Սրբագրիչ՝ Խ Այվազյան

Կոնտրոլ սրբադրիչ՝ Վ. Ավագյան

Դրավիտի լիազոր Ք Դ—5510

Հրատ. 4521, պատվեր 179 տիրաժ 3000

Հանձնված է արտագրության 1938 թ. փետրվարի 20-ին

Ստորագրված է տպագրության 1938 թ. մայիսի 9-ին

Թուղթը 72×105 , 2,5 տպ. մամ., հեղին.՝ 1 մամ., 1 թերթ

16320 տպ. նիշ: Դինը 1ա. 25կ.

Փետրվարի 2-ը տպարան, Յերեվան, Նալբանդյան 5

<< Ազգային գրադարան



NL0402232

Գրք 10. 50 Կ.

10186



ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՆ
ՏԱԻՆՆՏՎԵՆՅԱՆ ԿՈՎԵՐ
ԳԻՅ. ԱՐՄ. ՍՏՐ ԵՐԵՎԱՆ